# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԻՆ ՆՈՐ ՏԱՐԻ ՍԻՐԵԼԻ՛ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 3 - 4 (16602) ՇԱԲԱԹ, 13 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



**Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլի.**

Սիրելի հայրենակիցներ, շնորհավոր նոր՝ 2018 թվականը: Շնորհավորում եմ այն դահլիճից, որտեղ 100 տարի առաջ մեր նախնիները հայտարարել են առաջին վրացական հանրապետություն ստեղծելու մասին: Այս 100 տարին շատ դժվար է շրջան էր մեր երկրի համար, սակայն այսօր մենք անկախ ենք: Անկախ ենք եւ ընթանում ենք դեպի գերագույն նպատակ՝ ազատ Վրաստանի ստեղծում: Նրա համար, որպեսզի հասնենք մեր նպատակին, պետք է գիտակցենք բոլոր մարտահրավերները եւ միավորվենք հիմնական նպատակի շուրջ: Մեր գերագույն նպատակն է՝ ստեղծել միասնական եւ ամբողջական Վրաստան՝ աբխազների եւ օսերի հետ միասին: Նպատակներին հասնելու հիմնական հնարավորությունը, իհարկե, հզոր եւ արդյունավետ կրթության համակարգն է: Շատ կարեւոր է, որ տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար՝ աջակցենք մեր գործարարներին: Կարեւոր է, որ աջակցենք այն մարդկանց, ովքեր շարունակում են դարավոր ավանդույթը եւ պաշտպանում են մեր երկիրը ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ նրանից դուրս:

Շնորհավորում եմ մեկ անգամ եւս եւ ձեզ հետ միասին մասնակցելու եմ բոլոր նախաձեռնություններին, որոնք կապակվեն ազատության ձգտմամբ:



**Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլի.**

Իմ սիրելի հայրենակիցներ, բոլորիդ շնորհավորում եմ Նոր տարվա առթիվ: Յուրաքանչյուրիդ ընտանիքներին ցանկանում եմ երջանկություն եւ հաջողություններ:

Սիրելիներս, 2018 թվականն իսկապես առանձնահատուկ տարի է: Այս տարի մենք նշելու ենք մեր պետության անկախության 100-ամյակը: Շնորհավորում եմ մեր երկրի համար կարեւորագույն տարեթվի եւ մեզ բոլորիս նոր հնարավորությունների տարվա առթիվ: Ցանկանում եմ, որ ապրեք այնպիսի երկրում, որտեղ կիրականանան ձեր բոլոր մտքերը, որտեղ բոլորս միասին հոգ կտանենք նրա համար, ինչ-որ ունենք, ինչպես նաեւ սեփական ձեռքերով կստեղծենք մեր ապագան, որտեղ բոլորս անելու ենք մեր սիրելի գործը եւ բոլորս կարող ենք մեր գիտելիքներով ու փորձով ծառայել մեր սիրելի երկրին, մեր հայրենիքին: Մենք կառուցում ենք հենց այդպիսի Վրաստան:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ 2018 թվականի առթիվ: Երջանկությունն ու ուրախությունը թող չպակասի յուրաքանչյուրիդ ընտանիքներում: Բոլորիդ ցանկանում եմ խաղաղություն, բարեկեցություն, նորանոր հաղթանակներ:

Շնորհավոր Նոր տարի:

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «Է՛Լ ԱՎԵԼԻ ԱՄՐԱՑՆԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԵՌԱՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն իր Ամանորյա ուղերձում, խոսելով անցած 2017 թվականի երկրի ձեռքբերումների, իրականացված բարեփոխումների ու ծրագրված նախագծերի մասին, մասնավորապես, նշեց. «Երախտապարտ եմ Հայաստանի զինվորին ու շինականին, մտավորականին ու գործարարին, բոլոր-բոլորին՝ անձնուրաց աշխատանքի, հայրենասիրության եւ համբերության համար: Այն հավատը, որ մենք բոլորս ունենք մեր ժողովրդի եւ երկրի ապագայի հանդեպ, թող մեզ ուժ տա նաեւ նոր տարում:



Եվս մեկ տարի է գումարվում Հայաստանի հազարամյակների անցյալին եւ մեր երիտասարդ անկախ պետականության պատմությանը: Թող 2018 թվականին շարունակվի ամրապնդվել Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը, անառիկ լինեն մեր սահմանները եւ հյուրընկալ՝ մեր օջախները»,- հայտարարեց Հայաստանի նախագահը եւ հավելեց. «Թող միշտ սիրո, երջանկության, հոգատարության եւ փոխըմբռնման մթնոլորտ տիրի մեզնից յուրաքանչյուրի տանը:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ»:

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

### ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ ԵՆ ԵՐԿՐԻ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



*2018 թվականի հունվարի 6-ին Սուրբ Ծննդի եւ Աստվածհայտնության տոնի առիթով Վրաստանի հայ հավատացյալներին հատուկ ուղերձներով շնորհավորեցին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:*



Առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցում պատարագիչը եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանն էր:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ



Ուղերձում, մասնավորապես, ասված է. «Ամանորի եւ Սուրբ Ծննդյան ու Աստվածհայտնության տոների առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքները Տփղիսի Վիրահայոց թեմի եկեղեցականաց դասին, հա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՆՇՎԵՑ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 40 ԵՎ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿՆԵՐԸ

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԻՆ



*Ինչպես արդեն հաղորդել ենք, անցյալ տարվա վերջին եւ ընթացիկ տարվա մեկնարկին, Վրաստանում մեծ շուքով նշվեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդի գահակալության 40 եւ ծննդյան 85-ամյակները: Հոբելյանների կապակցությամբ, վրաց եկեղեցու ղեկավարին շնորհավորական ուղերձ հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը:*

Վեհափառ Հայրապետի շնորհավորական ուղերձում, մասնավորապես, ասված է. «Նշանակալից հոբելյանների կապակցությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, բոլոր հայերի հոգեւոր կենտրոնից Ձեզ, ձերդ սրբություն մեր աղոթքներն ու բարեմաղթանքներն ենք

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆԻՆ



Ամանորյա եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ, «Վրաստան» թերթի աշխատակազմին, մաղթում՝ արեւշատ ու քաջառողջ տարիներ:

Թող մարդացյալ Աստված իրականացնի Ձեր տեսիլքներն ու երազանքները եւ բարի գործերով մխիթարություն բերի բոլորիս:

Մեր աղոթքն է, որ Բեթղեհեմի անշեջ աստղը միշտ լուսավոր պահի ուղղափառ հավատքը մեր Հայրերի, որ Սուրբ Ծննդյան խորհուրդը ավելի գեղեցկացնի մեզ շրջապատող աշխարհը, որ մարդիկ ավելի շատ սիրեն իրար, երկիրը լցնեն սիրով, խաղաղությամբ ու անսպառ բարի գործերով:

Աղոթքով եւ օրհնությամբ՝

***ՏԵՐ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ***
***ԱՌԱՋՆՈՐԴ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ***

# ԱՄԱՆՈՐՅԱ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ



**«Վրաստան» թերթի խմբագիր պարոն Վան Բայբուրթյանին.**

Շնորհավորում եմ Ձեզ եւ Ձեր գլխավորած ստեղծագործական կազմի Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Նշանակալի փաստ է, որ «Վրաստան» թերթի ընթերցողների թվում շատ են մանկավարժներ, աշակերտներ եւ ծնողներ, ուստի ձեր թերթի էջերում հաճախ լուսաբանվող կրթության ոլորտի նորամուծությունները էական դեր են կատարում՝ օգնելով նրանց մանրամասն ծանոթանալ նախարարության կողմից իրականացվող բարեփոխումներին, այդով նպաստում իրականացվող փոփոխությունների առավել ընկալմանը:

Հաջողություններ եւ երջանկություն ենք մաղթում նոր՝ 2018 տարում:

***Հարգանքներով՝ ՄԻԽԵԻԼ ՉԽԵՆԿԵԼԻ***

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարար***



**«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին.**

Հարգելի' Վան, Ձեզ եւ «Վրաստան» թերթի խմբագրության աշխատակիցներին ի սրտե շնորհավորում եմ Նոր տարվա եւ Սուրբ Ծննդի առիթով:

Վստահ եմ, որ մեր երկրի համար կենսական նշանակություն ունեցող եւ քաղաքացիական ինտեգրման գործում մեծ ավանդ ներդնող «Վրաստան» թերթի հետ 2018 թվականն էլ կպսակենք արդյունավետ համագործակցությամբ՝ ի փառս մեր ընդհանուր հայրենիքի միասնականության եւ բարգավաճման:

***ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ***

***Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարար***



**Պարոն Վան Բայբուրթյանին.**

Ի սրտե շնորհավորում եմ «Վրաստան» թերթի աշխատակիցների Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Ձեզանից յուրաքանչյուրի ընտանիքին մաղթում հաջողություններ, իսկ իր հարյուրամյա հոբելյանին մոտեցող «Վրաստանին»՝ երկարակեցություն:

Օգտվելով առիթից՝ իմ երախտագիտությունն ու ամանորյա մաղթանքներն եմ հղում Ծալկայի շրջանի բնակիչներին: Թանկագի՛ն բարեկամներ, մենք համատեղ ուժերով շատ բան կարողացանք անել, թեպետ անելիքները շատ են: Շարունակենք համագործակցությունը եւ խոստանում եմ հնարավորինս անել առկա հիմնախնդիրների կարգավորման համար:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

***ԿԱԽԱ ՕՔՐԻԱՇՎԻԼԻ***

***Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր***



**Պարոն Վան Բայբուրթյանին.**

Սիրելի' բարեկամ, շնորհավորում եմ Ձեր եւ Ձեր գլխավորած խմբագրության աշխատակիցների, թերթի ընթերցողների Ամանորը եւ Սուրբ Ծնունդը:

Իմ ամանորյա մաղթանքներն եմ ցանկանում հղել Թբիլիսիի Իսանիի շրջանի իններորդ ընտրատարածքի բոլոր ընտրողներին, նրանց ընտանիքներին: Բարեկամներ, ամենայն բարիք ու հաջողություններ ձեզ, նոր՝ 2018 թվականին:

***ԴԱՎԻԹ ՃԻՃԻՆԱՁԵ***

***Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր***



**«Վրաստան» թերթի խմբագրությանը.**

«Վրաստան» թերթի աշխատակիցներին եւ, իհարկե, ձեր ընթերցողներին ի սրտե շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդի առիթով: Թող նոր՝ 2018 թվականը լինի արգասաբեր, հետաքրքիր եւ հաջողակ յուրաքանչյուրիդ համար:

Ձեր թերթի միջոցով ցանկանում եմ շնորհավորել համայն Վրաստանի Ամանորը:

Յուրաքանչյուր նոր տարի ուղեկցվում է նորամուծությունների սպասումներով, բարի ցանկությունների կատարման հույսերով: Ուստի, ցանկանում եմ յուրաքանչյուր քաղաքացու մաղթել ուրախություն եւ բարեկեցություն՝ մեր երկրի զարգացման ճանապարհին:

***ԹԵՄՈՒՐ ԱԲԱԶՈՎ***

***Մառնեուլիի մունիցիպալիտետի վարչության նախագահ***



**Թանկագի՛ն բարեկամներ.**

Ի սրտե շնորհավորում եմ «Վրաստան» թերթի խմբագրության բոլոր աշխատակիցների, ընթերցողների Ամանորն ու Սուրբ Ծնունդը, մաղթում՝ երջանկություն եւ առաջընթաց:

Իմ ամանորյա մաղթանքներն եմ հղում նաեւ Ծալկայի մունիցիպալիտետի բնակիչներին:

Թանկագին բարեկամներ, անկեղծ սրտով շնորհավորում եմ ձեզանից յուրաքանչյուրի Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Ամենայն բարիք ու հաջողություն ձեզ եւ ձեր ընտանիքներին:

***ԳՈՉԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ***

***Ծալկայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի փոխնախագահ***



**«Վրաստան» թերթի խմբագրությանը.**

Թանկագի՛ն բարեկամներ, իմ եւ բոլոր դամալացիների անունից ի սրտե շնորհավորում եմ «Վրաստան» թերթի աշխատակազմի, ընթերցողների եւ ողջ վիրահայության Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Դուք երկրի մասշտաբով գործող միակ թերթն եք, որ իր էջերում հիշատակում է Ասպինձայի շրջանն ու Դամալան: Ցավոք, Թբիլիսիում եւ այլ վայրերում անցկացվող համայնքային միջոցառումներին, չգիտես ինչու, շրջանցում են մեզ, մեղմ ասած, անտեսում: Լիահույս եմ, որ 2018 թվականից ներհամայնքային մեր կապերն այդ առումով ջերմ եւ գործնական կլինեն:

Ցանկանում եմ դիմել իմ սիրելի դամալացիներին: Դուք արդեն չորրորդ անգամ ինձ վստահել եք ձեր շահերը ներկայացնել շրջանային սակրեբուլոյում: Հավատացեք, դա յուրատեսակ քառակի պատասխանատվություն է, եւ ես հնարավոր ամեն ինչ կանեմ ձեր վստահությունն արդարացնելու համար:

***ԷՄԻՆ ԲԱԼՈՅԱՆ***

***Ասպինձայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր***

*գ. Դամալա*

## ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ԿՀԱՍՆԵՆՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆԸ»



Շատ մոտ անցյալում Նինոծմինդայի շրջանի հասարակայնության լայն շրջաններին հայտնի դարձավ մի նոր անուն՝ Անի (Անիվարդ) Մոսոյան: Եռանդուն ու թարմ ուժերով լեցուն երիտասարդ մասնագետ:

Երեւանի տնտեսա-իրավաբանական համալսարանի հոգեբանության ֆակուլտետը, ապա՝ Թբիլիսիի «Գաենաթի» ինստիտուտն ավարտելուց հետո, վրաց լեզվի ուսուցչուհի է աշխատել Նինոծմինդայի թիվ 3 հանրային դպրոցում, ապա նշանակվել Նինոծմինդայի ռեսուրս-կենտրոնի ղեկավարի պաշտոնում, ընտրվել մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամ: Իսկ 2017 թվականի տեղական ընտրություններին ընտրվել է Նինոծմինդայի քաղաքապետ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մայնքային վարչությանց պատվարժան անդամներին եւ հավատավոր Մեր զավակներին»:

Կաթողիկոսի ուղերձում շեշտվում է, որ փրկչական 2018 թվականին ազգովի պիտի տոնախմբենք եւ ոգեկոչենք Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման եւ մայիսյան հերոսամարտերի 100-րդ տարեդարձերը: Փառք Տիրոջ, այսօր ունենք անկախ պետություն, որ ամուր պատվարն է մեր ժողովրդի գոյության եւ հարատեւության:

Ուղերձի վերջում Վեհափառ Հայրապետը ընդգծում է. «Թող մարդացյալ Փրկիչը զորավիգ լինի վիրահայությանը՝ պարգեւելով խաղաղություն եւ նորանոր հաջողություններ՝ ի փառս Աստծո, ի պայծառություն Տիրախնամ Վիրահայոց թեմի եւ առաքելաշավիղ մեր Սուրբ Եկեղեցու»:

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԲԱԹՈՒՄԻԻՑ



Սիրելի' հայրենակիցներ. Վիրահայոց թեմի Ալեքսանդր Մանթաշյանց կենտրոնի եւ նրա ողջ կազմի անունից՝ համայն Վրաստանում, Մայր Հայրենիքում եւ Սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին, վրացի մեր քույրերին եւ եղբայրներին ջերմորեն շնորհավորում ենք Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով՝ ծովափնյա Բաթումիից, ուր ժամանակին ապրել ու արարել են Կոմիտաս Վարդապետը, դերասաններ՝ Պետրոս Ադամյանը, Սիրանույշը, Վահրամ Փափազյանը, բարերար Ալեքսանդր Մանթաշյանցը, ճարտարապետ Բոգդան Կիրակոսյանը, աշխարհահռչակ սեղանի թենիսիստ Սարգիս Սախոյանը:

Գնահատելով անցյալը՝ Վրաստանում ապրող հայերս կարող ենք համոզվել, որ միմիայն միասնական ոգով, հավատքով առ մեր Եկեղեցին, ինչպես նաեւ ազգային ավանդույթների եւ կենցաղի, հայի եւ Վրաստանի արժանի քաղաքացու կերպարի պահպանմամբ, մենք կարող ենք կերտել մեր ապագան: Ուրախալի է, որ այսօր այդ արժեքները կրում է նաեւ մեր կենտրոնը՝ Վիրահայոց թեմի բարեխնամ Առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի գլխավորությամբ:

***ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

***Բաթումիի Ալ.Մանթաշյանց կենտրոնի տնօրեն***

## ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ՁԵԶ, ՎԱՉԻԿ ՆԱԴԻՐՅԱՆ



2017 թիվը կարելի է համարել հաջող տարի մեր դպրոցի համար: Մեր շրջանավարտները հարյուր տոկոսով հանձնեցին ավարտական քննությունները, նրանցից շատերը «4+1» ծրագրով հանձնեցին ընդունելության քննությունները եւ այժմ սովորում են Վրաստանի տարբեր բուհերում: Նոր ուսանողներ ունեցանք նաեւ Հայաստանի բուհերում: Օգտվելով առիթից, ցանկանում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան օրվա կապակցությամբ, շնորհավորել մեր բոլոր շրջանավարտներին, մանկավարժներին, աշակերտների ծնողներին:

Առանձնակի երախտիք եմ ցանկանում հայտնել դպրոցի նոր հովանավոր Վաչիկ Նադիրյանին (ցավոք, թերթի նախորդ համարում, տեխնիկական պատճառներով մեր հովանավորի ազգանվան մեջ սխալ էր սպրդել, որի համար ներողություն ենք խնդրում), մարդու, ով վերջին տարիներին առաջինը օգնության ձեռք մեկնեց իր հարազատ կրթօջախին:

Շնորհակալություն Ձեզ, Վաչիկ Նադիրյան, շնորհավոր Ամանոր, եւ հուսով ենք, որ Ձեր օրինակին կհետեւեն նաեւ շատերը:

***ԱՐՏՈՒՇ ՈՒՌՈՒՄՅԱՆ***

***Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ մեկ հանրային դպրոցի տնօրեն***

## Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

# ՄՇԱԿՎՈՒՄ Է ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



***Վրաստանի կառավարությունը 2018 թվականին կմշակի գյուղի զարգացման միասնական ծրագիր, որը նախատեսում է գյուղերում կենսամակարդակի բարձրացում:***

Չնայած 2017-2018 թվականին գյուղատնտեսության նախարարության միավորման բնապահպանության նախարարությանը, 2018 թվականին գյուղատնտեսությունը շարունակում էր մնալ երկրի զարգացման գործում առաջնային ուղղություն:

2018 թվականին Վրաստանի կառավարությունը կշարունակի ակտիվ ագրոքաղաքականությունը, որի նպատակն է՝ բարձրացնել ագրոհատվածի մրցունակությունը, բարձր որակի ագրոմթերքների կայուն արտադրությունը, պարենամթերքի անվտանգության ապահովումը եւ գյուղի զարգացումը:

Ինչպես նշված է «Վրաստանի 2018 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում, գյուղատնտեսության ոլորտի զարգացման ռազմավարական գլխավոր ուղղությունը կլինի կոոպերատիվների զարգացումը եւ առանձնակի ուշադրություն կհատկացվի այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումներին:

Առանձնակի ուշադրություն կհատկացվի գյուղատնտեսական հողերի արդյունավետ եւ նպատակային օգտագործմանը: Այդ նպատակով, 2018 թվականին ծրագրվում է հիմնել ֆերմերների ռեեստր եւ հողի օգտագործման տեղեկատվական համակարգ: Բացի այդ, բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարությունը մտադիր է բարելավել ագրովարկավորման եւ ագրոապահովության համակարգերը:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԵՏ

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, գերատեսչության ղեկավար Միխեիլ Չխենկելին՝ «Լսենք ուսուցիչներին» կարգախոսով հանդիպումների շարք է սկսել Վրաստանում գործող մանկավարժների հետ:***



Առաջին նման հանդիպումը նախարարն անցկացրեց այն դպրոցների մանկավարժների հետ, որոնք 2017 թվականին աչքի են ընկել բացառիկ ակտիվությամբ, հոգացել են իրենց մասնագիտական հարցերով եւ կարողացել նշանակալի արդյունքների հասնել աշակերտների հետ աշխատանքում:

Նախարարի կողմից ծրագրված հանդիպումների նպատակն է՝ բաց ձեւաչափով քննարկել այն թեմաները, որոնք առնչվում են ուսուցման որակին, ինչպես նաեւ կրթօջախներում առկա հիմնախնդիրների կարգավորմանը: Հանդիպմանը մանկավարժներն առանձնակի ուշադրություն բեւեռեցին այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են ուսուցիչների մասնագիտանական զարգացումը, դասագրքերը, հաղորդակցությունը եւ այլն:

Հանդիպման մասնակիցներին տրվեց դասերի կառավարման խնդիրների, ինչպես նաեւ բուլինգի եւ բռնության հետ կապված տեղեկատվական տերմինաբանական գրականություն: Տեղեկատվական կտրոններ առաջիկա օրերին յուրաքանչյուր ուսուցչի, աշակերտի եւ ծնողի կհատկացնեն, որպեսզի ավելի տեղեկացված լինեն, թե ինչ է բուլինգը, բռնությունը եւ ինչպես պետք է գործեն այդպիսի իրավիճակներում:

Հիշեցնենք, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին, նման կարգախոսով հանդիպումները սկսել էր դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին: Այն ժամանակ «Լսենք աշակերտներին» կարգախոսով, կրթության նախարարը հանրային դպրոցներում անվտանգ եւ բարյացակամ միջավայի հաստատման թեմանեով, հանդիպում ունեցավ դպրոցների աշակերտների հետ:

# 48,1 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանում Եվրամիության ներկայացուցչությունը, Եվրամիությունը 140 մլն լարիի (48,1 մլն եվրոյի) չափով դրամաշնորհ է հատկացրել Վրաստանին:***

«Գնահատվել եւ հաջողված են ճանաչվել բարեփոխումները հետեւյալ ոլորտներում՝ առեւտրի եւ բիզնեսի զարգացում, մասնագիտական կրթություն եւ աշխատանքի տեղավորում, գյուղատնտեսություն, հարկադիր վերաբնակների ինտեգրում, արդարադատություն, հանրային վարչարարություն եւ ֆինանսների կառավարում, տարածաշրջանային զարգացման քաղաքականություն»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԵՄ-ի ներկայացուցչությունը նշել է, որ «Վրաստանի կողմից ձեռք բերված առաջընթացը Եվրամիությունը գնահատել է անկախ հաշվետվությունների հիման վրա՝ Վրաստանի կառավարության ստանձնած պարտավորությունների հաշվառմամբ»: Ներկայացուցչության տվյալներով՝ Վրաստանին միջոցները հատկացվում են Եվրամիության բյուջետային օգնության ծրագրի շրջանակներում:

# ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ



***Հունվարի 8-ին Թբիլիսիի Կովկասյան տանը անցկացվեց Սերգեյ Փարաջանովին նվիրված ստեղծագործական մրցույթի հաղթողների պարգեւատրման հանդիսավոր արարողությունը: «Վրացահայերի միության» նախաձեռնած սույն միջոցառումն անց է կացվում չորրորդ անգամ:***

Ժյուրիի որոշմամբ՝ ստեղծագործական մրցույթի գլխավոր պարգեւին՝ «Ոսկե դափնեկրի» կոչմանն է արժանացել Թինաթին Բուկիան: Նրան Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը հանձնեց պատվոգիր եւ Հայաստան այցելության եռօրյա ուղեգիր:

Մրցույթի առաջին տեղը զբաղեցրած Յուլյա Չադունելուն պատվոգիրը հանձնեց Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիան, երկրորդ տեղը զբաղեցրած Գոհար Հակոբյանին պարգեւը հանձնեց բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնազարը, իսկ երրորդ մրցանակակիր Լեւան Ցալուգելաշվիլուն պատվոգիրը հանձնեց «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: Մրցույթի մյուս մասնակիցներին պագեւատրեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր առաջնորդ Վիրապ Ղազարյանը:

Նշենք, որ Սերգեյ Փարաջանովին նվիրված ստեղծագործական մրցույթը տեղի է ունեցել 2017 թվականի հոկտեմբերի 15-ից դեկտեմբերի 28-ը: Մրցույթին երեք տասնյակից ավելի հայ եւ վրացի նկարիչներ հանդես են եկել իրենց հեղինակային ստեղծագործություններով:

Հիշեցնենք՝ հունվարի 9-ը 20-րդ դարի մեծատաղանդ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ծննդյան օրն է:

***Նկարում.- Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանը՝ Փարաջանովին նվիրված մրցույթի հաղթողների պարգեւատրման արարողությանը:***



## 39 ՄԻԼԻՈՆ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*2018 թվականի առաջիկա նախագահական ընտրություններում աշխատողների նախապատրաստման, նախընտրական քարոզարշավների, գովազդի ու ընտրական սուբյեկտների ֆինանսավորման համար հատկացվել է 39 136 784 լարի:*

*Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների ֆինանսավորման համար հատկացվել է ավելի քան 7 619 000 մլն լարի, ընտրական սուբյեկտների հեռուստատեսային գովազդային ծախսերը կգերազանցեն 2 242 850 լարին, աշխատողների վերապատրաստման համար՝ 1 002 300 լարի, ընտրական միջոցառումների համար՝ 28 272 634 լարի:*

*Վրաստանի նախագահի ընտրությունը տեղի կունենա այս տարվա աշնանը: Դա կլինի թվով հինգերորդ նախագահը:*

## ԱՆՆԱ ՆԱՑՎԼԻՇՎԻԼԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին երկրի նախագահի խորհրդարանական քարտուղար է նշանակել Աննա Նացվլիշվիլուն, ով մինչ այդ գլխավորում էր Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան:*

*Վրաստանի նախագահի խորհրդարանական նախկին քարտուղար Աննա Դոլիձեն՝ նախագահի կողմից նշանակվել է արդարադատության գերագույն խորհրդի անդամ:*

## ՓՈԽՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՍԱՀՄԱՆԻ ՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

*Թուրքիան փոփոխություններ է մտցրել Վրաստանի քաղաքացիների համար սահմանի հատման կանոնակարգում:*

*Համաձայն փոփոխությունների՝ 2018 թվականի հունվարի 1-ից Թուրքիայի հետ սահմանի հատումը եւ նույնիսկ փոքր ժամանակով տարածքում կանգ առնելը, կհամարվի մեկ օրացուցային օր:*

*Վրաստանի քաղաքացիները կարող են 180-օրյա ժամանակահատվածում Թուրքիայում գտնվել 90 օր: Ժամկետը լրանալուն պես՝ նրանք պետք է կեցության իրավունք ստանան:*

*Համապատասխան տեղեկությունը զետեղվել է Բաթումիում Թուրքիայի հյուպատոսության կայքում:*

## ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԸ ՓԱԿ Է

*Վրաստանի ենթակառուցների նախարարության ճանապարհային դեպարտամենտի տեղեկատվության համաձայն, հունվարի 10 -ից Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը, ձնահոսքի վտանգի պատճառով, փակ է տրանսպորտային բոլոր միջոցների համար:*

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



Սուրբ Ծննդյան տոնի առիթով, Վիրահայոց թեմի հավատացյալներին շնորհավորելու էին եկել Հաշտության եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, Կրոնի հարցերով պետական գործակալության նախագահի Զազա Վաշաղմաձեն, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Դավիթ Ճիճինաձեն եւ Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի Ժողովրդական պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ Կոբա Չոփլիանին, Իզաբելլա Օսիպովան, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան հայպետդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի կրթության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Արեւիկ» հիմնադրամի նախագահի, պրոֆեսոր Էմմա Ախտյանը, «Համընհանուր խաղաղության համար» հասարակական կազմակերպության գլխավոր քարտուղար Գիորգի Թումասյանը եւ ուրիշներ:

Արարողությանը ներկա էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Սուրբ Ծննդյան տոնական Պատարագ մատուցվեց նաեւ Ախալքալաքիի Սուրբ Խաչի եկեղեցում: Այստեղից ուղիղ հեռարձակմամբ, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը հայ հավատացյալներին շնորհավորեց Հիսուս Քրիստոսի Ծննդյան լույս տոնի ավետիսով, որից հետո Թեմակալ առաջնորդը տոնական Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց:

Պատարագին ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Ախալքալաքիի քաղաքապետ Յուրի Ունանյանը, մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահի Նաիրի Իրիցյանը:

Սուրբ Ծննդյան տոնը նշվեց նաեւ Վիրահայոց թեմի Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում: Սուրբ Ծննդյան պատարագին ներկա գտնվեցին եւ հավատացյալներին շնորհավորեց Բաթումիի քաղաքապետ Լաշա Կոմախիձեն:

Պատարագին ներկա էր Բաթումիում Հայաստանի Գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանը:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնական արարողությունները անցկացվեցին Վրաստանի հայաբնակ բոլոր վայրերում գործող եկեղեցիներում:

## ՆՇՎԵՑ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 40 ԵՎ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿՆԵՐԸ

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հղում, շնորհավորում գահակալության 40 եւ ծննդյան 85-ամյակների առթիվ: Անցած չորս տասնամյակների ընթացքում Ձեր անձնուրաց ծառայության, Աստծո եւ Աստվածաշնչի խոսքերի տարածմամբ գլխավորել եք Վրաց Ուղղափառ եկեղեցին, արժանացել հավատացյալների սիրուն եւ հարգանքին: Ձեզ համար տոնական այս օրերին մեր աղոթքներն ենք հղում Ամենաբարձրյալին եւ մաղթում Ձեզ քաջառողջություն՝ հանուն Աստծո կողմից Ձեզ տրված հոտի բարեկեցության եւ Վրաց Ուղղափառ եկեղեցու ծաղկման»,- ասված է Վեհափառ Հայրապետի ուղերձում:

*Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդը (Իրակլի Ղուդուշաուրի-Շիոլաշվիլի) ծնվել է 1933 թվականի հունվարի 6-ին, Վլադիկավկազում: Սովորել է տեղի թիվ 22 ռուսական միջնակարգ դպրոցում: 1952 թվականին, միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, Իրակլի Շիոլաշվիլին ուսումը շարունակել է մերձմոսկովյան Սերգեեվ Պասադ վանական համալիրի, նախ ճեմարանում, ապա՝ հոգեւոր ակադեմիայում:*

*1957 թվականի ապրիլի 16-ին օծվել է հոգեւորական: 1963-67 թվականներին գլխավորել է Վրաց Ուղղափառ եկեղեցու Ճեմոքմեդիի թեմը, իսկ 1967 թվականի սեպտեմբերի 1-ից, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Եփրեմ Երկրորդի օրհնությամբ, նշանակվել է Ցխում Աբխազիայի թեմի առաջնորդ:*

*1977 թվականին, դեկտեմբերին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Դավիթ Հինգերորդի վախճանից հետո, Վրաց Ուղղափառ եկեղեցու Սուրբ Սինոդի կողմից Ցխում Աբխազիայի Միտրոպոլիտ, 45-ամյա Իլիան ընտրվել է Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք:*

*1977 թվականի դեկտեմբերի 25-ին Մցխեթայի Սվետիցխովելի Տաճարում կայացել է Իլիա Երկրորդի գահակալության արարողությունը, որին ներկա են գտնվելերկրի այն տարիների ղեկավարները, պաշտոնական անձինք: Գահակալության արարողությանը մասնակցել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը:*

*Միջոցառմանը հաջորդած ընդունելությանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի բաժակաճառը վրացերենից թարգմանեց այն ժամանակ Վրաստանում մամուլի եւ նորությունների գործակալության (АПН) սեփական թղթակից Վան Բայբուրթյանը:*

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

# ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

### ՀԻՆ ՆՄՈՒՇԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ԵՆ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, մինչեւ 2006 թվականի ապրիլի մեկը տրված վարորդական վկայականները 2018 թվականի հունվարի 1-ից հետո էլ մնում են ուժի մեջ:




Նախարարության տեղեկատվությամբ, Վրաստանի ՆԳ նախարարի նախաձեռնությամբ, քաղաքացիները սպասարկումների գործակալության կառույցներում վերոնշյալ վկայականները կկարողանան փոխել մինչեւ 2018 թվականի ապրիլի 1-ը: Վրաստանի խորհրդարանի որոշմամբ, «Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքում վերոնշյալ փոփոխությունն արդեն գործարկվել է: Այն դեպքում, եթե քաղաքացին, մինչեւ 2018 թվականի ապրիլի 1-ը, հին նմուշի վարորդական վկայականը չփոխի, ապա, փաստաթուղթը ավտոմատորեն համարվում է չեղարկված, եւ քաղաքացին մեքենան կկարողանա վարել միայն վկայականը փոխելուց հետո:

Վարորդական վկայականը փոխել ցանկացողները, 2018 թվականի ապրիլի 1-ից հետո էլ չեն հանձնելու վկայականի ստացման համար անհրաժեշտ տեսական եւ գործնական քննությունները: Նշենք, որ վերոնշյալ փոփոխությունները չեն առնչվում արդի, պլաստիկ վարորդական վկայականներին:

### ՏԵԽՍՏՈՒԳՄԱՆԸ ԶՈՒԳԱՀԵՌ, ԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է ԹԵԺ ԳԻԾ

2013 թվականի հունվարի 3-ից, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության նախաձեռնությամբ, գործում է 1484 թեժ գիծ, որը սպասարկում է ավտոտրանսպորտի տեխնիկական պարբերական տեսչության գործարկման գործընթացով հետաքրքրվող անձանց:

Հիշեցնենք, որ 2018 թվականի հունվարի 1-ից պարտադիր տեխստուգում է սահմանվել ուղեւորատար (ավելի քան 8 տեղանոց) եւ բեռնատար (ավելի քան 3,5 տոննա բեռնատարողության) ավտոմեքենաների համար: Հաջորդ փուլում տեխստուգումը պարտադիր կդառնա պետական գերատեսչությունների եւ իրավաբանական անձանց սեփականության ներքո գտնվող ավտոտրանսպորտային միջոցների, ինչպես նաեւ մեծ ծավալի շարժիչով (3,0 եւ ավելի) ավտոմեքենաների համար: Մինչեւ 2019 թվականի վերջը տեխնիկական տեսչության են ենթակա Վրաստանում գրանցված բոլոր ավտոմեքենաները: Տեսչության ժամանակացույցը սահմանվել է, ելնելով ավտոմեքենաների գրանցման ամսաթվից, ինչն ավտոմեքենաների սեփականատերերին թույլ կտա ժամանակին պատրաստվել տեխստուգումն անցնելու եւ կանխել հնարավոր հերթերի գոյացումը:

### ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ 100 ՄԻԱՎՈՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպես տեղեկացրել է ՆԳ նախարարությունը, այսպես կոչված, միավորների համակարգի ներդրումից հետո, Վրաստանի մասշտաբով անցյալ տարվա հուլիսի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ, վարորդական իրավունքից զրկվել է 19 մարդ:

Հիշեցնենք, որ Վրաստանում 100 միավորի համակարգը ներդրվեց անցյալ տարվա հուլիսի 1-ից: Ըստ համակարգի, յուրաքանչյուր վարորդին տրվեց 100 միավոր, որոնք նվազեցվում էին նրանց կողմից թույլ տրված խախտմանը զուգահեռ: Տրված լիմիտի սպառումից հետո, վարորդը զրկվում է վարորդական իրավունքից: Միավորները հաշվարկված էին մինչեւ 2017 թվականի վերջը: 2018 թվականի հունվարի 1-ից ողջ տարվա համար վերապահվում է 100 միավոր:

Վերոնշյալ համակարգում բոլորից շատ խախտումներ վավերացվել են Թբիլիսիում: Մայրաքաղաքում վարորդական իրավունքից զրկվել է 10 մարդ, եւս՝ 9 վարորդ այդ իրավունքից զրկվել է Վրաստանի տարածաշրջաններում: Գործող օրենսդրության համաձայն, վարորդական իրավունքից զրկված անձինք իրենց իրավունքները կարող են վերականգնել մեկ տարի անց:

Ամենից շատ իրավախախտումներ են վավերացվել արագության գերազանցման, շրջայցի կարգի խախտման, հոծ գծի հատման եւ կանգառման կարգի խախտման ուղղությամբ:

### ՄԵԿ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է 31377 ԽԱԽՏՈՒՄ



Անցյալ տարվա նոյեմբերի 2-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը ներառյալ, Վրաստանի ողջ մասշտաբով «խելացի խցիկների» կողմից վավերացվել է 31377 խախտում: Վերոնշյալ իրավախախտումներից առաջացած տուգանքները վճարել են 13581 դեպքում, ընդ որում՝ 8625-ի դեպքում վարորդներն օգտվել են 20 տոկոսանոց զեղչից եւ տուգանքը մուծել են սահմանումից 10 օրվա ընթացքում:

Բոլորից շատ իրավախախտում է վավերացվել Գորիում: Այդտեղ մոնտաժված «խելացի խցիկներից» մեկը վավերացրել է 5698 խախտում, հիմնականում՝ արագության գերազանցում: Թբիլիսիում մոնտաժված 33 խցիկների կողմից վավերացվել է 18307 խախտում:

### ԱՋԱՂԵԿ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒՄ ՂԵԿԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

2018 թվականի հունվարի 1-ից արգելք է սահմանվել աջաղեկ մեքենաներում ղեկի տեղափոխման հարցում: Ինչ վերաբերում է արդեն տեղափոխված ղեկով մեքենաներին, ապա, դրանց հանդեպ կգործեն առանձնակի սահմանափակումներ, եւ կսահմանվեն տեխստուգումներ:

Ինչպես հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության ցամաքային տրանսպորտի զարգացման դեպարտամենտի տնօրեն Միխեիլ Խմալաձեն, մինչեւ չորս տարվա թողարկման մեքենաների տեխստուգումը պարտադիր չէ, իսկ 4-8 տարվա թողարկման մեքենաները կանցնեն տեխստուգում երկու տարին մեկ անգամ: Ավելի տեւական թողարկման ժամկետ ունեցող մեքենաները, որոնց թողարկման տարիքը անցնում է ութ եւ ավելի տարի, ամեն տարի կանցնեն տեխստուգում: